Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ջրի պոմպի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/43 ծածկագրով գնման ընթացակարգի

/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

25 սեպտեմբերի 2023թ.

ք. Երևան, Բաղրամյան 19 ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մամբրեյան, Մ.Սամսոնյան, Վ.Մացակյան, Է.Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	ջրի պոմպեր	1100000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 20.09.2023թ.-ին ժամը 10:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.09.2023 թ.-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	ԴՈՆԵՌ ՍՊԸ	ք.Երևան Գայի 51/5	098815666	donernorq@yandex.ru
2	Էլիտպրոմ ՍՊԸ	Ք.Երևան Աթոյան փ 111/1	93407178	elitprom1@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/43 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակիցներ	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Էլիտպրոմ ՍՊԸ	1100000	0 %	1100000	1100000	0 %	1100000.00	
	ԴՈՆԵՌ ՍՊԸ	24999999	20 %	29999998.8	24999999	20 %	29999998.80	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 22.09.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Էլիտպրոմ ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Էլիտպրոմ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- Հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ 1-ին կետում Մասնակցի կողմից ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես՝ «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «1) Էլիտպրոմ ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/43 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Էլիտպրոմ ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»: Բացակայում է Մասնակցի ղեկավարի անունը, ազգանունը:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում / Հավելված 1.3/ ներկայացված հղմամբ տեսանելի չէ /ներկայացված է ոչ ամբողջական/ իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվությունը:

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Ապրանքային նշան» սյունակում բացակայում է առաջարկվող ապրանքի ապրանքանշանը, «Արտադրող» սյունակում անհրաժեշտ է նշել ապրանքն արտադրող կազմակերպության ամբողջական անվանումը՝ նշելով նաև վերջինիս կազմակերպաիրավական ձևը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում երաշխիքային ժամկետը ենթակա է շտկման և հստակեցման, Հրավերով սահմանվել է «Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 2 տարի», մինչդեռ Մասնակցի կողմից ներկայացվել է «Երաշխիքային ժամկետը՝ մինչև 2 տարի»: <Q=առնվազն 70մ3/ժամ, H=առնվազն 40մ.> առաջարկվող ապրանքի հատկանիշներում առկա են «**առնվազն**» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ և ամբողջությամբ նկարագրել առաջարկվող ապրանքի հստակ հատկանիշները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 25.09.2023թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից Էլիտպրոմ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 27.09.2023թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 27.09.2023թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ Էլիտպրոմ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Էլիտպրոմ ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

27.09.2023թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Էլիտպրոմ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակցի հայտը մերժել:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վաչե Մամբրեյան

_____ Մերուժան Սամսոնյան

_____ Վահան Մացակյան

_____ Էլեն Մնացականյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան